

Միջոցառումներ

Տեղի է ունեցել «Գերծանր միջուկներ և ատոմներ» միջազգային գիտաժողովը՝ նվիրված աշխարհահռչակ հայազգի գիտնական, ՌԳԱ ակադեմիկոս, Մենդելեևի անվ. ՅՈՒՆԵՍԿՕ-Ռուսաստան միջազգային մրցանակի դափնեկիր, ՌԴ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի Միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար, ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանի 90-ամյակին:

ԳԱԱ նախագահ ակ. Ա.Սաղյանը Փարիզում մասնակցել է Միջազգային գիտական խորհրդի (ISC) անդամների «Գիտության մեջ սիներգիայի կիրառումը» միջնաժամկետ հանդիպմանը, որի նպատակն էր ամրապնդել ՄԳԽ անդամների կապերը, քննարկել գիտության ոլորտում համաշխարհային առաջընթացը, անդամների և ՄԳԽ կարիքներն ու առաջնահերթությունները:

Դեկտեմբերին տեղի է ունեցել ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի XI հեռավար նիստը, որը նախագահել է 2023թ. խորհրդի նախագահ ընտրված ակ. Ա.Սաղյանը: Նիստին մասնակցել են խորհրդի անդամներ Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ռուսաստանից, Տաջիկստանից, ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչներ, քննարկվել է ԱՊՀ անդամ պետությունների հիմնարար գիտության ոլորտում համագործակցության զարգացման 2023-24թթ. հիմնական միջոցառումների ծրագիրը, համագործակցության հետագա զարգացման հայեցակարգը, առաջնահերթ գործողությունների պլանը:

Համագործակցության համաձայնագրեր և պայմանագրեր

2023 թ. համագործակցության համաձայնագրեր են կնքվել ՀՀ ԳԱԱ և հետևյալ կազմակերպությունների միջև.

- Չեռնոգորիայի գիտությունների և արվեստի ակադեմիա
- Չինաստանի գիտությունների ակադեմիայի
- Մոլդովայի գիտությունների ակադեմիայի
- Իրանի Իսլամական Հանրապետության գիտությունների ակադեմիա

Պատվիրակությունների ընդունելություն

ՀՀ ԳԱԱ-ն 80-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում հյուրընկալել է մի շարք արտասահմանյան պատվիրակություններ:

ԳԱԱ հյուրընկալել է Չինաստանի գիտությունների ակադեմիայի պատվիրակությանը: Այցի ընթացքում ԳԱԱ նախագահ ակ. Ա.Սադյանը և ՉԳԱ փոխնախագահ Չ.Յապինը ստորագրել են գիտական համագործակցության հուշագիր ֆիզիկայի ու աստղաֆիզիկայի, էկոլոգիայի, քիմիայի ու կենսաբանության, երկրաբանության ոլորտներում համագործակցության ամրապնդման ու զարգացման նպատակով:

Վ.Համբարձումյանի անվ. միջազգային գիտական մրցանակ

ՀՀ ԳԱԱ 80-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում տեղի է ունեցել Վ.Համբարձումյանի անվ. 2020թ. միջազգային գիտական մրցանակի հանձնման արարողությունը: Մրցանակները հանձնվել են պրոֆ. Ալեքսանդր Սալային (Ջոնս Հոփքինսի համալսարան, Բալթիմոր, ԱՄՆ), պրոֆ. Իզաբել Բարաֆին (Էքսետերի համալսարան, ՄԹ և Լիոնի CRAL/ENS, CNRS, Ֆրանսիա), պրոֆ. Ադամ Բարրուզին (Աստղաֆիզիկական գիտությունների բաժին, Փրինսթոնի համալսարան, ԱՄՆ):

Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումներ

Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների Խորհրդի և Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների հիմնադրամի միջև փոխըմբռնման հուշագրի շրջանակում Նոբելյան մրցանակակիրների 72-րդ հանդիպմանը մասնակցել է Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող կ.գ.թ. Ռ.Զախարյանը:

ANSO-BIDI

Շարունակվել է համագործակցությունը Չինաստանի գիտությունների ակադեմիայի հետ Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ՄԳԿԴ) շրջանակում: ANSO-BIDI school-ը կազմակերպել է եռամսյա դասընթացների շարք կառավարում, նորարարություններ, առաջնորդություն ու կայուն զարգացում թեմաներով: Դասընթաց-ների մասնակիցները «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախագծին միացած երկրների գիտական հետազոտական ինստիտուտների ներկայացուցիչներն են: 2023թ. ԳԱԱ շուրջ 27 գիտնական է մասնակցել դասընթացներին:

Գիտական ասոցիացիաներ

ԳԱԱ շարունակել է մասնակցել և իրականացնել տարբեր միջազգային գիտական ծրագրեր, այդ թվում՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC), Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF), Միավորված ազգերի զարգացման ծրագրի (UNDP), «Հորիզոն Եվրոպա» ծրագրի, Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության (BMBF), Գերմանական Շտիֆտունգ Ֆոլքսվագեն հիմնադրամի (Volkswagen Stiftung Foundation), Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպության (NATO), Եվրոպական կենսաքիմիական ընկերությունների դաշնության (FEBS), Միջազգային զարգացման գործակալության (USAID) և այլ հիմնադրամների ծրագրերին (միջազգային գիտական ծրագրերի ու հիմնադրամների մասնակցության արդյունքները ներկայացվում են ստորև):

2023թ. արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել ԳԱԱ 606 գիտնական, որոնցից գիտաժողովների է մասնակցել 275, համատեղ աշխատանքներ է կատարել 161, բանակցություններ է վարել ու քննարկումներին մասնակցել 170 գիտաշխատող: Արտա-սահմանից ժամանել է 1026 գիտնական, որոնցից գիտաժողովների է մասնակցել 530, համատեղ աշխատանքներ է կատարել 301, բանակցություններ է վարել ու քննարկումներին մասնակցել 195 գիտաշխատող: Կնքվել են համատեղ հետազոտություններ կատարելու, նոր արտադրություն սկսելու համագործակցության հուշագրեր ու պայմանագրեր: